

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՒՍԱԿԱՆ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ  
ԿՈՄԻՏԵԻ

Հ Ր Ա Մ Ա Ն Ա Գ Ի Ր

(Դ Ե Կ Ր Ե Տ)

Ռուսաստանի Սօցիալիստական Դեմոկրատիկ  
Խորհրդային Հանրապետության Ժողովրդական  
Իստարանի մասին  
(Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ի Ր Ք)

Քաղաքային ԿՐԻՄԸ ՅՈՂԶՄԵՆՆԻՍԵԱՆ

25634

Երևան 1921 թ.

ԴԱՏԱԿԱՆ ԶՄՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԻՆԻՔՆԵՐԸ

1 307. — Ռուսաստանի Սօցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետության սահմաններում հիմնուած է միակ (ЕДИНЫЙ) ժողովրդական դատարան՝

1) մի մշտական ժողովրդական դատաւորի,

2) երկու կամ վեց հերթական դատաւորների ժողովրդական ատենակալների,

կազմով:


2 307. — Ժողովրդական դատարանը գործում է Խորհրդային դաւառական կամ քաղաքային շրջանի տերրիտորիայում:

3 307. — Ժողովրդական դատարանների թիւը ամեն մի առանձին խորհրդային շրջանում որոշում են բանւորական ու գիւղացիական պատգամաւորների խորհուրդների գաւառական կամ քաղաքային գործադիր կոմիտէները և հաստատում է բանւորական ու գիւղացիական պատգամաւորների խորհուրդների նախագահական գործադիր կոմիտէն:

Այն քաղաքներում, ուր գոյութիւն ունեն շրջանային խորհուրդներ, ժողովրդական դատարանների թիւը որոշում են բանւորական ու գիւղացիական պատգամաւորների շրջանային խորհուրդները և հաստա-



~~30659~~  
25634



տում է բանւորական ու գիւղացիական պատգամաւորներին քաղաքային խորհուրդը:

4 307. — Երջանի սահմաններում ժողովրդապահան դատարանին ենթակայ են յանցանքներին ու զանցանքներին վերաբերեալ բոլոր քրէական գործերը, գոյքային ու անձնական իրաւունքներին ու շահերին վերաբերեալ վէճերը և նմանապէս անվիճելի վարութիւն (производство) կարգով դատարանի իրաւասութեանը վերադառնալով բոլոր գործերը, որով հանրացուցութեան սեկ հիմնարկութեան համար պահանջում է սեկ իրողութիւն կամ դէպք հաւաստել:

Մանօթութիւն. — Հակաշեղափոխական արարքներին ու քայլերին (выступление), սաքոտաժին, խորհրդային իշխանութեան վարկաբեկման և լրտեսութեան վերաբերեալ գործերը դատում է յիդափոխական արխրունալը, որից կախած է արարքը քաղաքական նշանակութիւն չունեցող ձանաչել և գործը ժողովրդական դատարանին յանձնել:

5 307. — Ժողովրդական դատարանը գործում է՝ կամ 1) մի մշտական ժողովրդական դատարարի, կամ 2) մշտական ժողովրդական դատարարի և երկու հերթական ժողովրդական ատենակալներին:

կամ 3) մշտական ժողովրդական դատարարի և վեց հերթական ժողովրդական ատենակալներին, կազմով:

6 307. — Մշտական ժողովրդական դատարար միանձնաբար՝

1) քննում է ամուսնալուծական գործերը և ան-

վիճելի վարութիւն կարգով սրբաւոյ գործերը:

2) հարկ եղած դէպքում նախնական քննութիւն է կատարում այն քրէական գործերի մասին, որոնք ենթակայ են ժողովրդական դատարանին, իր մասնակցութեամբ, երկու ատենակալների կազմով:

3) Ստուգում է շրջանի արգելանքներում պահուցանների կալանաւորութեան ստիժների օրինականութիւնն ու կանոնաւորութիւնը և այդ ստիժների անկանոնութեան ու ապօրինութեան դէպքում արգելաւորութեամբն ազատում է:

4) Տակում է խորհրդային միլիցիայի մարմինների ձեռքով կատարուող նետաքննութիւնների վրայ՝ ղեկավարիչ ցուցմունքներ տալով, հաստատում կամ սասակացնում է այն միջոցները, որ այդ մարմինները ձեռք են առնում քննութիւնից խուսափումը խափանելու նպատակով, խափանման միջոցները մեղմացնելու անհրաժեշտութեան դէպքում հարցը անմիջապէս յանձնում է ժողովրդական դատարանի քննութեանը:

7 307. — Ժողովրդական դատարանը գործում է մշտական ժողովրդական դատարարի և վեց հերթական ժողովրդական ատենակալների կազմով այն քրէական գործերը դատելիս, որոնք վերաբերում են՝ մարդկային կեանքի դէմ կատարուող ձեռնձգութիւններին (посыгательство), ծանր վէրքեր կամ հաշմութիւն պատճառելուն, բռնարարութեան, աւագակութեան, դրամանիշների ու փաստագիրների կեղծման, կաշառակերութեան և մեղափաճառային ու չափադուրծ (нормированный) միջոցների չարաշահութեան:

8 307.— Ժողովրդական դատարանը գործում է մշտական ժողովրդական դատաւորի ու երկու հերթական ժողովրդական ատենակալներին կազմով՝ բոլոր մնացեալ քրէական և բոլոր քաղաքացիական գործերը դատելիս:

Ծանօթութիւն.— Ժողովրդական դատաւորը կարող է անհրաժեշտ ճանաչել՝ այս յօդուածում յիշուած քրէական գործերը վեց ատենակալների կազմով դատել:

9 307.— Քրէական ու քաղաքացիական գործեր քննելիս հերթական ժողովրդական ատենակալները դատի բոլոր ընթացակէտերում (стадия) նոյն իրաւունքներն են վարելու, ինչ որ մշտական ժողովրդական դատաւորը, նրա հետ միասին վճռելով յանցանքի իրողութեան, պատժի, հայցապահանջների բաւարարման կամ հայցի մերժման խնդիրները և գործ քննելիս ծագող բոլոր հարցերը:

10 307.— Վեց հերթական ժողովրդական ատենակալներին մասնակցութեամբ տեղի ունեցող դատական ատենանում նախագահում է մշտական դատաւորը կամ ատենակալներից մէկը դատարանի տեսչ կազմի մնարութեամբ, երկու հերթական ժողովրդական ատենակալների մասնակցութեամբ տեղի ունեցող դատական ատենանում նախագահում է մշտական ժողովրդական դատաւորը:

11 307.— Մասնագիտական հմտութիւն պահանջող քաղաքացիական գործեր քննելիս՝ ժողովրդական դատարանը կարող է, ըստ իր հայեցողութեան, գիտակ անձեր հրաւիրել դատական նիստին:

Ժողովրդական Դատարանի Եւ ԱՏԵՆՍԿԱԼՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԿԱՐԳԸ

12 307.— Մշտական ժողովրդական դատաւորները պիտի համապատասխանեն հետեւեալ պայմաններին:

1) քանւորական ու գիւղացիական պատգամաւորներին խորհուրդներին անդամ ընտրելու և ընտրուելու իրաւունք պիտի ունենան:

2) կուսակցութեան պրօլետարական կազմակերպութիւնների, արհեստակցական (պրօֆեսիօնալ) միութիւնների, բանւորական կօօպերատիւներին, գործարանագործատնային (фабрично-заводский) կօմիտէներին ու խորհրդային հիմնարկութիւնների մէջ աշխատելու քաղաքական փորձառութիւն պիտի ունենան:

3) խորհրդային դատաւորի պաշտօնի համար տեսականօրէն ու գործնականօրէն պատրաստած լինին:

Մշտական ժողովրդական դատաւորը պիտի անպատճառ համապատասխանի առաջին պայմանին և վերջին երկու պահանջներից գոնէ մէկին:

13 307.— Մշտական ժողովրդական դատաւորները հետեւեալ կարգով են ընտրուում.

1) բանւորագիւղացիական պատգամաւորներին շրջանային խորհուրդներ ունեցող քաղաքներում նրանց ընտրում է առանձին շրջանային խորհուրդների ընդհանուր ժողովը՝ բանւորական ու գիւղացիական պատգամաւորներին շրջանային խորհրդի գործադիր կօմիտէի առաջարկած թեկնածուներին թուից, նախօրօք մանրաքնին կերպով ստուգելով թեկնածուների հա-

մատգատասխան լինելը իրենց պաշտօնին, իսկ մնացեալ քաղաքներում միևնոյն կարգով նրանց ընտրում է բանւորական ու գիւղացիական պատգամաւորների քաղաքային խորհրդի ընդհանուր ժողովը:

2) Գուտաւներում, մէջն ասնելով նաև քաղաքային խորհուրդներ չունեցող քաղաքները, նրանց ընտրում են բանւորական ու գիւղացիական պատգամաւորների խորհուրդների գաւառական շամագումարների գործադիր կոմիտէները, որոնք թեկնածուների ցանկի մէջ մայնում են բանւորական ու գիւղացիական պատգամաւորների խորհուրդների գիւղական ու վոլոստային գործադիր կոմիտէների առաջարկած այն բոլոր թեկնածուներին, որոնք գոհացնում են 12 յօդւածի պահանջները:

Ծանօթութիւն.—Մշտական ժողովրդական դատաւորներին ամեն ժամանակ կարող են յետ կանչել նրանց ընտրող բանւորական ու գիւղացիական պատգամաւորների խորհուրդները կամ խորհուրդների համագումարների գործադիր կոմիտէները:

14 30Գ.—Հերթական ժողովրդական ատենակալ միայն այնպիսի անձեր կարող են լինել, որոնք իրաւունք չեն ունենում բանւորական ու գիւղացիական պատգամաւորների խորհրդի անդամ ընտրել ու ընտրուել:

15 30Գ.—Հերթական ժողովրդական ատենակալների ցանկերը կազմում են առանձին դատական շրջանի բանւորական կազմակերպութիւնները և վոլոստային ու գիւղական խորհուրդները և ուղարկում են

բանւորական ու գիւղացիական պատգամաւորների խորհուրդները շրջանային, քաղաքային կամ գաւառական գործադիր կոմիտէներին ի հաստատութիւն:

Ծանօթութիւն.—Գուտաւներում ժողովրդական ատենակալների ցանկերը կազմուած են վոլոստային պատգամաւորական խորհուրդների շրջաններում:

16. 30Գ.—Ժողովրդական ատենակալների ցանկերը կազմուած են 6 ամսով:

17 30Գ.—Ժողովրդական ատենակալների հաստատուած ցանկերից այս կանոնադիրքի 7 յօդւածում յիշուած գործերը բնեկու համար ժողովրդական գատարանի իւրաքանչիւր նստաշրջանի համար վիճակով ընտրուած են ութ-ութ ատենակալներ (6 հերթական ու 2 պահեստի), իսկ 8 յօդւածի յիշուած գործերը համարներից—երեք ատենակալներ (2 հերթական ու 1 պահեստի) հետևալ կարգով,—բանւորական ու գիւղացիական պատգամաւորների շրջանային խորհուրդներունեցող քաղաքներում նրանց ընտրում է այդ խորհուրդների նախագահութիւնը աւելալ խորհրդային շրջանի մշտական դատաւորների կողմէ գիւղային հետ միասին, իսկ մնացեալ քաղաքներում և գաւառներում բանւորական ու գիւղացիական պատգամաւորների քաղաքային կամ գաւառական գործադիր կոմիտէների նախագահութիւնը՝ ժողովրդական դատարանի կամ ժողովրդական դատաւորների խորհրդի ներկայիսների հետ միասին:

Ծանօթութիւն.—Ժամանակ խնայելու նպատակով, ատենակալներին վիճակով ընտրող մար-

մինները կարող են միաժամանակ հաստատել մի քանի հերթեր ժողովրդական դատարանների ներկայացրած նստացանկի համաձայն:

18 ՅՕԴ.—Իւրաքանչիւր ատենակալ ժողովրդական դատարանի նիստերին մասնակցում է առ առաւելն վեց նիստի ընթացքում, պահելով այդ միջոցին իր աշխատանքի վայրում իր աշխատավարձը ստանալու իրաւունքը: Վաստակ չունեցողները և գիւղատընտեսութեամբ կամ արհեստով զոյուլթեան միջոցներ վաստակողները նիստերի օրերի համար համապետական միջոցներից օրապահիկ են ստանում տեալ վայրի համար սահմանւած՝ աշխատավարձի նուազագունակի (մինիմումի) չափով:

19 ՅՕԴ.—Մշական ժողովրդական դատարանը նստաշրջանի սկզբնաւորութեան մասին ծանուցագրերով յայտնում է հերթական ժողովրդական ատենակալներին իրենց բնակատեղի հասցէով այնպիսի հաշուով, որ ծանուցագիրը ատենակալին յանձնւի ոչ ուշ քան նստաշրջանի սկզբնաւորութիւնից 3 օր առաջ:

20 ՅՕԴ.—Ժողովրդական ատենակալները արգարդատութեան պետական պահուլթիւնից (повинность) խուսափելու իրաւունք չունեն: Նիստերին բացակայող այն ատենակալը, որ օր առաջ չի յայտնել, թէ չի կարող ներկայ լինել, և իր բացակայութեան պատճառների յարգելիութեան ապացոյցներ չի ներկայացրել, մինչև 100 ոս տուգանքի է ենթարկուած նոյն ժողովրդական դատարանի տնօրինական նիստում կայացրած որոշմամբ: Տուգանքները մուծում են յիկամուտ Հանրապետութեան՝ Արդարադատութեան ժողովրդական կոմիսարիատի նախահաշուով:

### ԴԱՏԱՎԱՐ ՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՋԲՈՒՆՔՆԵՐԸ

21 ՅՕԴ.—Ռուսաստանի սոցիալիստական ֆեդերատիվ խորհրդային հանրապետութեան մէջ թոյլ է տրւում դատաստութիւն բոլոր անդական լեզուներով:

Բանւորական ու գիւղացիական պատգամաւորների քաղաքային խորհուրդն է կամ բանւորական ու գիւղացիական պատգամաւորների խորհուրդներէ գաւառական համադուժարների գործադիր կոմիտէն, որ որոշում է ժողովրդական դատարանի ներկայիչների հետ միասին, թէ ինչ լեզուով կամ լեզուներով է կատարուած դատաստութիւնն ու դատավարութիւնը տուեալ դատական շրջանում:

22. ՅՕԴ.—Բոլոր գործերը քննելիս ժողովրդական դատարանը կիրառում է ջանւորագիւղացիական կառավարութեան հրամանագիրները, իսկ համապատասխան հրամանագիր չեղած կամ եղածի անլիութեան դէպքում՝ ղեկավարում է սոցիալիստական իրաւագիտակցութեամբ:

Ծանօթութիւն.—Արգելւում է տապալուած կառավարութիւնների օրէնքներին յատկապէս թիւեր դատակնիքների ու վճիռների մէջ:

23 ՅՕԴ.—Ժողովրդական դատարանն իրաւունք ունի ըստ իր համոզման որոշել պատժի չափը, ինչպէս և վճիռ կայացնել մեղադրեալին «մեն տեսակ պատժից պայմանաւորապէս կամ բոլորովին ազատելու մասին»: Այն դէպքերում երբ հրամանագրում սահմանւած է պատժի ամենացած չափը (նօրմա) ժողովրդական դատարանը իրաւունք ունի պատիժը պակսեցնել կամ բոլորովին պատժից ազատել՝ միայն

պատճառարանելով դատակներէ մեղմացման հիմքերը:

24. 30Դ.— Ժողովրդական դատարանի համար պարտաւորիչ չեն ոչ մի տեսակ ձեռկան տպացոյցներ և նրանից է կախւած զործի հանգամանքներին նայելով ոյս յայն տպացոյցները թոյլ տալ կամ թէ տպացոյցներ պահանջել երրորդ անձերից, որոնց համար այդպիսի մի պահանջ պարտադիր է: Երգումը իբրև տպացոյց, թոյլ չի տրուում:

25. 30Դ.— Թոյլ չեն տրուում ձեռկան բացարկներ (ОТВОД) քաղաքացիական գործերում՝ հայցերի խառնման և մասնատման մասին:

26. 30Դ.— Գաւառիներին թոյլ է տրուում դատավարութեան ընթացքում թէ փոխել հայցի կամ հակապահանջների հիմքերը և թէ ընդլայնել զործը նոր պահանջներով և նոր անձեր կցորդել զործին հայցւորի կամ պատասխանողի կողմը:

27. 30Դ.— Վկաները առանց երդումի են ցուցմունք տալիս, նախագուշացելով սուտ վկայութեան համար սպաննացող պատասխանատուութեան մասին և համապատասխան ստորագրութիւն տալով:

### ՔՆՆՈՒԹԻՒՆ

28. 30Դ.— Այն քրէական գործերում, որ ժողովրդական դատարանը վճռում է վեց անոնականների մանակցութեամբ, նախնական քննութեան կատարումը յանձնուում է գաւառական կամ քաղաքային քննիչ յանձնաժողովներին: Անպետք քրէական

գործերում ժողովրդական դատարանից և կախւած միլիցիայի կատարած հետաքննութեամբ բաւականանալ կամ զործը յանձնել քննիչ յանձնաժողովին նախնականքննութիւնկատարելու իսկ անյետաձգելի դէպքերում նախնական քննութեան կատարումը մշտական ժողովրդական դատարանին յանձնել:

29. 30Դ.— Գաւառի կամ քաղաքի տերրիտորիայի բաժանումը քննական շրջանակների (СЛЕДСТВЕННЫЙ УЧАСТОК) կատարում է բանւորական ու գիւղացիական պատգամւորների խորհուրդների գաւառական գործադիր կոմիտէն և հաստատում է բանւորական ու գիւղացիական պատգամւորների խորհուրդների նահանգական գործադիր կոմիտէն: Բացի նահանգականներից նաև առանձին յատուկ քաղաքային խորհուրդներ ունեցող քաղաքներում՝ քաղաքային տերրիտորիայի բաժանումը քննական շրջանակների կատարում են բանւորական ու գիւղացիական պատգամւորների քաղաքային խորհուրդները:

30. 30Դ.— Իւրաքանչիւր շրջանակային քննիչ յանձնաժողով բաղկանում է նախագահից ու երկու անդամից, որոնց ընտրում են բանւորական ու գիւղացիական պատգամւորների քաղաքային խորհուրդները կամ բանւորական ու գիւղացիական պատգամւորների խորհուրդների գաւառական գործադիր կոմիտէները: Քննիչ յանձնաժողովի նախագահին ու անդամներին կարող են, երբ ուզեն, յետ կանչել թէ նրանց ընտրող խորհուրդները և թէ խորհրդային իշխանութեան համապատասխան բարձրագոյն մարմինները (հիմնական օրէնքի 62 յօդ.):

31 ՅՕԴ.— Քննիչ յանձնաժողովների նախագահն ու անդամները պիտի համապատասխանեն հետևեալ պայմաններին.

1) բանւորական ու գիւղացիական պատգամաւորների խորհուրդներին անգամ ընտրելու և ընտրուելու իրաւունք պիտի ունենան:

2) խորհրդային քննիչի պաշտօնի համար տեսականօրէն ու գործնականօրէն պատրաստւած լինեն:

32 ՅՕԴ.— Քննիչ յանձնաժողովը նախնական քննութիւն է սկսում՝

1) քաղաքացիները յայտերը հիման վրայ,

2) միլիցիայի և պաշտօնական անձերի ու հիմնարկութիւնների հաղորդագրութեան հետևանքով:

3) ժողովրդական դատարանի որոշմամբ,

4) իր հայեցողութեամբ:

33) ՅՕԴ.— Քննիչ յանձնաժողովը կարող է աջակցութիւն պահանջել թէ խորհրդային միլիցիայից և թէ բոլոր մասնաւոր անձերից ու պաշտօնեաներից և պետական ու հանրային հիմնարկութիւններից:

34 ՅՕԴ.— Նախնական քննութեան մէջ թոյլ է տրուում մասնակցել՝ քննութեան ենթարկուողի խնդրքով պաշտպանների կօլլէկիայի կողմից նշանակւած պաշտպանին, բայց պաշտպանի մասնակցութիւնը կարող է սահմանափակուել քննիչ յանձնաժողովի որոշմամբ, եթէ այդ պահանջեն ճշմարտութիւնը բացառու շահերը:

35 ՅՕԴ.— Քննիչ յանձնաժողովը լրիւ կազմով՝

1) յարուցանում կամ կարճւում է քննութիւնը,

2) ընտրում ու փոփոխում է խափանման միջոցներ,

3) որոշում է կայացնում քննութեան եզրափակման կամ դատի մասնման մասին:

36 ՅՕԴ.— Քննիչ, յանձնաժողովի որոշումը քննութեան կարճման կամ դատի մասնման մասին, ամբողջ գործավարութեան հետ միասին, ուղարկւում է յանցագործութեան վայրի ժողովրդական դատարանին: Գործը կարճելու հարցի վերջնական վճիռը ժողովրդական դատարանին է վերապահւած:

37 ՅՕԴ.— Քննիչ յանձնաժողովը առանձին քննական գործողութիւնները, օրինակ վիճակների հարցուփորձը, տեղական նայումն (осмотр на месте) իրիզէն ապացոյցների քննութիւնը և այլն, կարող է յանձնել իր առանձին անդամներին կամ կատարել ամբողջ կազմով:

38 ՅՕԴ.— Քննիչ յանձնաժողովի որոշումների դէմ կարելի է երկու շաբաթեայ ժամկետում գանդատալ յան ագործութեան վայրի ժողովրդական դատարանին, որի որոշումները այդ գանդատներով յարուցւած հարցերի մասին վերջնական են համարւում:

39 ՅՕԴ.— Քննիչ յանձնաժողովի որոշումը դատի մասնման կամ քննութեան կարճման մասին պիտի պատճառարանւած լինի: Եթէ ժողովրդական դատարանը այդ որոշումը ոչ բաւականաչափ նիւնաւորւած է ճանաչում, գործը յիս է նւղարկուում քննիչ յանձնաժողովին լրացուցիչ քննութիւն կատարելու համար:

ՊԱՅՏՊԱՆՆԵՐԻ, ՄԵՂԱԴԻՐՆԵՐԻ ԵՒ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ  
ԴԱՏԵՐՈՒՄ ԿՈՂՄԵՐԻ ՆԵՐԿԱՅԻՉՆԵՐԻ ԿՕՂԼԵԳԻԱ-  
ՆԵՐ

40 307. — Մեղադրեալին կամ քաղաքացիական  
դատում մասնակցող կողմերի շահելին վերաբերող  
բոլոր հանգամանքների լրագոյն լուստարանման գոր-  
ծում դատարանին աջակցելու համար, բանւորական  
ու զիւղացիական պատգամաւորների խորհուրդները  
գաւառական գործադիր կոմիտէներին (գաւառական  
քաղաքն էլ մէջն առած) և բանւորական ու զիւղա-  
ցիական պատգամաւորներին խորհուրդներին նախնա-  
գական գործադիր կոմիտէներին կից հիմնուած են  
պաշտպաններին, մեղադիրներին և քաղաքացիական գա-  
տում կողմերի ներկայիչներին կօլլէգիաներ:

41 307. — Կօլլէգիայի անգամներին ընտրուած  
են բանւորական ու զիւղացիական պատգամաւոր-  
ներին խորհուրդների գործադիր կոմիտէները, նոյն  
հիմքերով, ինչ որ խորհրդային հանրապետութեան  
ընդր միւս պաշտօնեաներին, հիմնական օրէնքի  
64 յօդուածի պահանջները բաւարարող անձերի  
կազմից:

42 307. — Կօլլէգիայի անգամները, իրրե խոր-  
հրդային հանրապետութեան պաշտօնեաները, բաժնիկ  
են ստանում Արդարագատութեան ժողովրդական  
Կօմիտէի ստի նախահարու ժողովրդական դատարան-  
ների համար սահմանուած շախիւլ:

43 307. — Մեղադրեալի խնդրերով գատին մաս-  
նակցելու համար պաշտպան հրաւիրելը պարտադիր

է այն քրէական գործերում, որոնք ըննուած են վեց  
ժողովրդական ատենակալների մասնակցութեամբ:  
Մնացեալ քրէական գործերում պաշտպանի մասնակ-  
ցութիւն թոյլ տալու հարցը վճռում է դատարանը  
տնօրինական կամ դատական նիստում:

25634

30659


Ծանօթութիւն. — Այն զէպրերում, երբ անհրա-  
մեշտ է ճանաչուած մեղադրի մասնակցութիւնը  
դատում, պարտաւորիչ է նաև պաշտպանի  
մասնակցութիւնը:

44. 307. Առանձին դատական նստաշրջանի  
մի շոցին պաշտպաններին, մեղադիրներին և կողմերի  
ներկայիչներին կօլլէգիան քրէական դատելում մաս-  
նակցելու համար ժողովրդական դատարան է ու պար-  
կում իր անդամներին դատարանի մասնաւոր թուով:

45. 307. Դատում մասնակցող պաշտպաններին  
աւ մեղադիրներին դատարանը անձնապէս (персональ-  
но) նշանակում է կօլլէգիայի դատարան ու զարկ-  
ուած անդամներին թուից:

46. 307. Քաղաքացիական գործերում դատա-  
րանում իրենց շահերի ներկայիչներ ունենալ ցան-  
կացող կողմերը ներկայիչ նշանակելու խնդրքով  
ղեմում են անմիջապէս կօլլէգիայի խորհրդին: Կօլ-  
լէգիայի խորհուրդը, գործի էութեանը ծանօթանա-  
լով, կարող է ներկայիչ նշանակելու խնդրքը մեր-  
ժեղ խորհրդի ներկայիչ նշանակելու խնդրքը մեր-  
ժող որոշման դէմ շահագրգիռ կողմը կարող է գան-  
դատուել գործը ըննող դատարանին:

47. 307. Բացի կօլլէգիայի անդամներից, կա-  
րող են իրրե կողմերի ներկայիչներ ու պաշտպան



ներ մասնակցել դատին ա՛ դատուողներն մօտիկ ազգականները, ենչպէս օրինակ ծնողները, գաւակները, ամուսինները, եղբայր ու քոյրերը, ք. խորհրդային հիմնաւորութիւնները, երբ աստիճանները (իւրեւեակները) կրենց զեկազար մարմինները լիազօրութեամբ:

48. ՅՕԴ. Դատերում կօլլէզիայի անդամները մասնակցութեան համար արուելիք վարձատրութիւնը նշանակում ու առնում է դատարանը, որ այդ վարձատրութիւնը մօժում է յեկամօտ հանրակրթական արգարագատրութեան ժողովրդական կօլլիտարիատի նախահաշուով:

49. ՅՕԵ. Դատական հիմնարկութիւնների համար պաշտպաններ ու մեղադիրներ ուղարկելու և քաղաքացիական դատերում կողմերի ներկայիչներ նշանակելու 45 ու 46 յօդուածներով նախատեսուած պարտականութիւնը դրում է կօլլէզիայի խորհրդի վրայ, որ ընտրում են կօլլէզիայի անդամները միտարի ժամանակով:

**ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԱՏԱՒՈՐՆԵՐԻ ԵՒ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՏԵՆԱԿԱՆՆԵՐԻ ԲԱՅԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ**

50. ՅՕԶ. Մեղադրեալն ու քաղաքացիական դատում կողմերը բացարկ (отвод) յայտնելու իրաւունք ունեն թէ ժողովրդական դատուորի, թէ ժողովրդական ատենակալների դէմ:

51. ՅՕԸ. Բացարկը իր հիմքերը բացատրութեամբ հանդերձ յայտնուած է դատական նիստը բացուելիս և վճռահատում է դատարանի կազմի կողմից պահեստի ատենակալի մասնակցութեամբ:

52. ՅՕԹ. Ժողովրդական դատուորը և ժողովրդական ատենակալները պարտաւոր են իրենց բացարկել այն դէպքում, եթէ ուղղակի կամ անուղղակի շահագութուած են գործի վախճանի մէջ կամ առանձին յարաբերութիւններ ունեն կողմերի հետ:

**ԳՈՐԾԵՐԻ ՎԱՐՈՒԹՅՈՒՆ (ПРОИЗВОДСТВО) ՄԱՍԻՆ**

53. ՅՕԿ. Ժողովրդական դատարանում գործերը վարութքը սկսում է քաղաքացիներին յայտնել, բանտրական ու զեղացիական պատգամաւորների խորհուրդների գործազիշ կօմիտէներին առաջարկով, պաշտօնատար անձերի առաջարկով և դատարանի հայեցողութեամբ այն դէպքերում, երբ դատարանը բանտրագիւղացիական Լատվալուիւն ունէ հրամանագրի լախտուէն կամ ունէ յանցագործութիւն է երևան հանում:

54. ՅՕԼ. Անհրաժեշտ դէպքում ժողովրդական դատուորը կարող է իր միանձնական որոշումը մեղադրեալին ձերբակալութեան ենթարկել, սակայն այդպիսի մի որոշում պիտի հաստատուի ժողովրդական դատարանի կողմից ոչ ուշ քան մերձագոյն նիստում:

55 ՅՕԼ. Գալանւորուած մեղադրեալներին գործերը քննութեան են նշանակում առաջին հերթին:

56 ՅՕԿ. Շահագրգիւ անձերը վաղօրօք դատակոչում են ծանուցագրերով կամ բերանացի ծանուցում են ստանում դատի ժամանակի մասին ու նշանակուած ժամկէտին ներկայանալու ստորագրութիւն տալիս:

Ծանուցադրելու մ նշանակու մ է, թէ տուեալ անձը իբրև վկայ է կանչու մ, թէ իբր մեղադրեալ, տուժող, փորձագէտ (էքսպէրտ) կամ դատուող կողմ:

Ծանօթութիւն.— Ծանուցադրելն ուղարկու մինչ, վերադարձնելիք ստացադրելի հետ միասին, պատելիք ալ ծրարով ցտիչներէ կամ միլիցիայի ձեռքով:

57 ՅՕԴ. Չներկայանալու համար տոյժերը նըշանակու մ են և դատակոչուածին դատարանը բերելու հարցը վճուում է ժողովրդական Դատարանի որոշումներով:

58 ՅՕԵ. Նիսաը բացելուն պէս նախագահողը մեղադրեալին, ինչպէս և կողմերին, բացատրում է, որ նրանք իրաւունք ունեն բացարկ յայտնել թէ ժողովրդական դատարանի, թէ հերթական ժողովրդական ատենակալներէ դէմ:

59 ՅՕԶ. Դատարանը պարզում է, թէ կողմերից և վկաներից ու գործին մասնակցողներից ով է նիստին եկել և վճում է այն հարցը, թէ կարելի է արդեօք գործը քննել իր ներկայ գրութեան մէջ՝ կողմերէ, մեղադրեալի կամ վկաների չներկայանալը առանց յարգելի պատճառների՝ չի խանդարում գործը քննելուն, եթէ դատարանը պարտաւորիչ չճանաչի նրանց դատեկը: Եւործը կողմերի բացակայութեամբ քննելուց յետոյ դատակնիքի և վճու պատճէնը հաղորդում է մեղադրեալին կամ պատասխանողին: Ի բացակայ կայացած դատակնիքների ու վճու ների դէմ առաք չի ընդունու մ և նրանց դէմ կա-

րելի է դանդաղ տալ միայն վճարեկ կարգով ընդհանուր հիմքով, որպիսի դանդաղ տալու ժամկէտը հաշու մ է դատակնիքի ու վճու պատճէնի կամ կատարած ման ծանուցադրի ընձեռման վայրկիանից, նայելով թէ նրանցից որն է աւել շուտ յանձնուել:

60 ՅՕԴ. Երբ կողմերը խնդրում են վկաներ հարցնել, դատարանը պահանջում է մատնանշել, թէ ինչ հանգամանքներ են հաստատելու այդ վկաները, և վճում է վկաներին ընդունել թէ չընդունել:

61 ՅՕԴ. վկաների հարցաւորներից առաջ դատարանը պարզում է, թէ ինչ յարաբերութիւններ գոյութիւն ունեն կողմերի ու վկաների միջև դատուող գործի նկատմամբ:

62 ՅՕԴ. Բացի վկաներից հարցաքննում են նաև փորձագէտներ, եթէ կանչուած են նիստին: Անհրաժեշտ դէպքում գննութեան են ենթարկում իրեղէն ապացոյցները, որ դատարանը նախօրօք, մինչև գործը նշանակելը, պիտի բերել տուած լինի:

63 ՅՕԴ. վկաները մինչև իրենց հարցաւորած չեն կարող ներկայ լինել նիստի դանխձում գործի քննութեան ժամանակ:

64 ՅՕԴ. Դատարանի բոլոր նիստերը բաց են, բայց եթէ ուէ նկատառու մով անհրաժեշտ համարելի հասարակութիւնը կարող է դատարանի որոշմամբ հեռացել:

65 ՅՕԴ. Այն գործի դատը, որի առթիւ նախնական քննութիւն է կատարուած, սկսում է ժողովրդական դատարանի գեկուցումով և դատի մատն-

լու մասին քննիչ յանձնածուղով կայացրած որոշման ընթերցումով: Դրանից յետոյ նախագահողը մեղադրեալին հարցնում է՝ արդեօք ընդունում է մեղադրանքի ճշտութիւնը:

66 ՅՕԴ. Մնացեալ ըրեալան, ինչպէս և քաղաքացեալան գործերը քննելիս ժողովրդական դատարորի զեկուցումից յետոյ խօսքը արւում է մեղադրին կամ հայցւորին, որպէսզի իրողութիւնները յառաջ բերեն ու լուսարանեն: Նախագահողը քանաձեռում է մեղադրանքը կամ հայցի էութիւնը և հարցնում է մեղադրեալին՝ արդեօք խոստովանում է իր մեղքը կամ պատասխանողին՝ ատանձնում է արդեօք հայցը:

67. ՅՕԴ. — Երբ ենթադատը (подсудимый) լիովին խոստովանում է իր մեղքը և այդ խոստովանութիւնը չի հակասում գործի հանգամանքներին, դատարանը կարող է վկաներին հարցափորձի չենթարկել կամ, պէտքեականներին հարցափորձելուց յետոյ, անցնել դատական նիստի հղրափակիչ վայրկեաններին:

68. ՅՕԴ. — Մեղքն ու բանալու զէպքում՝ դատարանը լսում է մեղադրեալի ըացատրութիւնը և հարցափորձում է վկաներին, որոնց մէկ—մէկ հրաւիրում է նիստի դահլիճը: Վկաներից ուցմունքները կարճառօտ զրի են անցում ատենագրութեան մէջ, որի տակ նրանք ստորագրում են: Վկաները հսում են նիստի դահլիճում մինչև որ դատարանը նրանց ազատի: Եթէ վկան անգրագէտ և, դրա Ֆասին յեշատակում է ատենագրութեան մէջ:

69. ՅՕԴ. — Այն գործերում, որոնք դատարանի կարծիքով կարող են հաշտութեամբ վերջանալ, կողմերին հարց է արւում՝ չեն ցանկանում արդեօք հաշտել:

70 ՅՕԴ. — Երբ դատարանը գտնում է, որ գործը դատական քննութեամբ լուսարարչափ պարզեած է, ապիս է վերջին խօսքը կողմերին այն ձևով, որ վերջինը խօսի պատասխանողը կամ մեղադրեալը (պաշտպանից յետոյ, եթէ նա գործին մասնակցում է) և այնուհետև հետանում է խորհրդակցական սենեակը վճիռ կամ դատակիւր կայացնելու համար:

71. ՅՕԴ. — Ոչ մի կողմակի անձի թոյլ չի տրւում դատարանի խորհրդակցութեան ժամանակ խորհրդակցական սենեակը մտնել:

72. ՅՕԴ. — Դատակիւրը կամ վճիռը կայանում է ձայների մեծամասնութեամբ: Դատակիւրին համաձայն չեղող դատարանի անդամը կարող է ներկայացնել իր առանձին կարծիքը, որ պիտի կցուի ատենագրութեանը:

73. ՅՕԴ. — Դատակիւրում կամ վճռում պիտի մասնանշեն դատակիւրի կամ վճռի էութիւնն ու հիմքերը:

ԺՈՂՈՎՐԴԱՅԱՆ ԴՍՏԱՐԱՆԻ ԴՍՏԱՅԻՆԻՔԻ ՈՒ ՎՃՌԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

74. ՅՕԴ. — Ժողովրդական դատարանի դատակրուիքներն ու վճիռները վերջնական են և առկոչային կարգով բողոքարկման ենթակայ չեն:

75. 30Գ.—Քրէական գործերի գատակնիքների և քաղաքացեական գործերի վճիռների գէմ կարելի է գանգատ տալ վճռարեկ կարգով ժողովրդական գատաւորների խորհրդին:

Ծանօթութիւն.—Դատակնիքն էլ ղէմ կարող են գանգատ տալ թէ մեղադրեալները և քրէական հետապնդումն յարուցանող անձերն ու երկնարկութիւնները, և թէ բանւորական ու գիւղացիական պատգամաւորների խորհուրդների տեղակաւ գործադիր կօնստէները:

76. 30Գ.—Վճռարեկ գանգատները արոււմ են կամ դատակնիք կամ վճիռ կայացնող ժողովրդական գատարանի միջոցով և ժողովրդական գատաւորների ձեռքով գործի հետ միասին ոչ ոչ քան երեք օր յետոյ ներկայացոււմ են ժողովրդական գատաւորներն խորհրդին, կամ թէ արոււմ են անմիջապէս ժողովրդական գատաւորներն խորհրդին:

77. 30Գ.—Վճռարեկ գանգատ տալու համար մի ամուսի ժամկէտ է սահմանուած գատավճիռը յայտարարելու օրէնց:

**ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱԿՆԻՔՆԵՐԻ ՈՒ ՎՃԻՌՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԴԱՄԻՆ**

78. 30Գ.—Ժողովրդական գատարանի գատակնիքներն ու վճիռները ի կատար են ածոււմ բողոքարկման ժամկէտը լրանալուց անմիջապէս յետոյ: Այն ղէպքերուժ, երբ կողմերը վճռարեկ գանգատ տալուց հրաժարոււմ են, գատակնիքներն ու վճիռները ի կատար են ածոււմ մինչև յիշեալ ժամկէտի լրանալը: Սահմանուած ժամկէտի ընթացքուժ տուած

վճռարեկ գանգատը առկայուժ է կատարածուժը մինչև գանգատի ժողովրդական գատաւորների խորհրդուժ վճուիլը: Ժողովրդական գատարանը գատակնիք կամ վճիռ կայացնելիս պարտաւոր է կարգադրել խափանման և հայցի պահովման միջոցներ ձեռք առնելու կամ ձեռք առնածները փոխելու մասին:

79. 30Գ.— Ժողովրդական գատարանն իրաւունք ունի գատապարտեալներին վաղակէտ աղաանել ու ներման արժանացնել և նրանց իրաւունքները վերականգնել թէ անձամբ նրանց. թէ նրանց մերձաւորներն խորհրդով, ինչպէս նաև, վաղակէտ աղատման հրահանգով նախատեսուած կարգով, պատիժը կիրառող մարմինների անաջողութեամբ:

80. 30Գ.— Բանադատ աշխատանքները կամ ուրիշ տեսակ իրաւագրկման գատապարտող գատակնիքները ի կատար են ածոււմ խորհրդային իշխանութեան միլիցիայի ձեռքով, իսկ քաղաքացիական գործերի վճիռները և ամեն տեսակ զրամատոյժեր զտահան կատարածուները ձեռքով:

**ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԱՏԱՆՈՐՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ**

81. 30Գ.— Ռուսաստանի Սօցիալիստական մէկէրաաիվ խորհրդային հանրապետութեան սեկ նահանգի կամ նրան համապատասխանող աւանձին տէրրիտօրիական միութեան կողմի մէջ մասնող բոլոր ժողովրդական գատարանները մի գատական շրջան են կազմոււմ:

Ծանօթութիւն.— Մտկվա ու Պետրօգրադ քաղաքները անջատօրէն առանձին գատական շրջաններ են կազմոււմ:

82. 30Գ.— Ամեն մի գատական շրջանուժ ժո-

զովրդական դատաւորների խորհուրդ է հիմնուում, ժողովրդական դատարանների վրայ մի ձևւորագոյն վերահսկողութիւն ունենալու և նրան ցղատակելիքն ի վճիռների ու գործողութիւնների դէմ արած վճռաբեկ ու մասնաւոր գանգատները քննելու համար:

83. 80Գ. — Ժողովրդական դատաւորների խորհուրդը շաղկապած է.

1) Ժողովրդական դատաւորների խորհրդի նախագահից ու նրա տեղակալից.

2) Ժողովրդական դատաւորների խորհրդի կրկուսից մինչև հինգ մշտական անդամներից.

3) Շրջանի ժողովրդական դատաւորներից, որոնք ներթով մասնակցում են խորհրդի նիստին:

84. 80Գ. — Ժողովրդական դատաւորների խորհրդի նախագահին, նախագահի տեղակալին ու մըշտական անդամներին ժողովրդական դատաւորների թուից ընտրում են շրջանի ժողովրդական դատաւորների նահանգական համագումարները, իսկ Սօսկվայում ու Պետրօգրադում նրանց ընգհանուր ժողովները, և հաստատում են բանւորական ու գիւղացիական պատգամաւորների նահանգական կամ քաղաքային խորհուրդների համապատասխան գործադիր կոմիտէները: Նախագահը, տեղակալն ու մշտական անդամները կազմուում են ժողովրդական դատաւորներ խորհրդի նախագահութիւնը և կարող են երեւնց պաշտօնից յետ կանչուել նահանգական ու քաղաքային գործադիր կոմիտէների կողմից թէ նրանց նախաձեռնութեամբ և թէ ժողովրդական դատաւորների համագումարների ու ժողովի օտաջաղութեամբ:

85. 80Գ. — Գործեր քննելու համար ժողովրդական դատաւորների խորհուրդը կազմուում է քրէական քաժանմուռներ և քաղաքացիական քաժանմուռներ:

ներ, որոնց կառավարումը յանձնուում է իր նախագահութեան անդամներին:

86 80Գ. Վճռաբեկ գանգատներ քննելու համար ժողովրդական դատաւորների խորհրդի նիստերը կայանուում են հինգ հոգու, ժողովրդական դատաւորները խորհրդի նախագահութեան երկու անդամների և երեք ժողովրդական դատաւորների կազմով: Ժողովրդական դատարանների առաջին գործողութիւնների դէմ աւած գանգատներ և մասնաւոր գանգատներ քննելու համար՝ նիստից կայանուում են ոչ պակաս քան երեք անդամի կազմով: Նախագահութեան անդամի անհրաժեշտ մասնակցութեամբ: Վերահսկողութեան պաշտօնը պատկանում է ժողովրդական դատաւորների խորհրդի նախագահութեանը:

87 80Գ. Ժողովրդական դատաւորները խորհրդի ամեն մի քաժանմուռը՝ նիստերի ղեկավարութիւնը յանձնուում է նախագահողին, որին այդ նըպատակով ընտրում է տեալ կողմը իր միջից, կամ ժողովրդական դատաւորների խորհրդի նախագահութեան անգամներից մէկին:

88 80Գ. — Գործեր քննելու ժողովրդական դատաւորների խորհուրդը ատենակոչուում է՝ տուժողներին, մեղադիրներին, կողմերին և իրեղէն ապացոյցների վրայ իրաւունք յայտնող անձերին, սակայն նրանց օտեան չգալը գործի քննութիւնը չի առկայում, քացի անդէպերից, երբ խորհուրդը նրանց ներկայութիւնը անհրաժեշտ է ճանաչուում:

89 80Գ. — Ժողովրդական դատաւորների խորհուրդը իրաւունքունի գատակնիքներ ու վճիռներ փոխել այն դէպքում, երբ տեղի է ունեցել հրամանագրերի այնպիսի խախտումն կամ անկանոն կի

քառուսն, որ նա էական է համարում, մասնաւորապէս երբ տեղի է ունեցել զատալարական ձեերի խախտումն, ինչպէս և քննութեան անլրահատարութեան զէպքում: Ժողովրդական դատարանի խորհրդին իրաւունք է զիրաւանաւ ժողովրդական դատարանի դատակնիքներն ու վճիռները փոխել նաեւ այն զէպքերում երբ ժողովրդական դատարանի բողոքարկուած դատակնիքներն ու վճիռները ակնբերօրէն անարդար են:

90 307. — Կործեր քննելիս ժողովրդական դատարանի խորհուրդը չի կաշկանդուած վճարեկ գանգաւ սահմաններով ու նրա մէջ մասնանշուած առիթներով:

91 307. — Դատակներ կամ վճիռ փոխելիս ժողովրդական դատարանի խորհուրդը մասնանշուած է, թէ ինչումն է կայանում օրէնքի կիրառման անկանոնութիւնը, դատալարութեան ինչ ձեեր են խախտուած և կամ ինչումն է արտայայտուել քննութեան անլրահատարութիւնը կամ փոխուած դատակնիքի կամ վճիռ ակնբեր անարդարութիւնը:

92 307. — Դատակնիք կամ վճիռ փոխելիս, ժողովրդական դատարանի խորհուրդը կործեր յանձնուած է, կրկին ըստ էութեան քննելու համար, նոյն շրջանի ուրիշ ժողովրդական դատարանի: Կործը վերաքննող դատարանի համար պարտադիր են այն ցուցմութիւնները, որ արել է ժողովրդական դատարանի խորհուրդը դատակնիքը կամ վճիռը փոխելու պատճառարանութեան մէջ:

93. — Դատակնիք կամ վճիռ փոխելու զէպքում կործեր նրեք օրուայ ընթացքում ուղարկուած է այն ժողովրդական դատարանին, որին յանձնուած է կործի վերաքննութիւնը, իսկ ժողովրդական դատարանը

նրի խորհրդի վճիռ պատճէնը ուղարկուում է փոխուած դատակնիքը կամ վճիռը կայացնող ժողովրդական դատարանին ի ղեկավարութիւն:

ԴԱՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ԵՒ ԴԱՏԱԿԱՆ ԿԱՆՔԵՐԻ  
ՄԱՍԻՆ

94 307. — Բողաքացեական գործերի համար ժողովրդական դատարանը առնում է տուրք և թերթավճար: Տուրք առնում է 1% -ի չափով մինչև 500 աւուրլի հայցագին ունեցող գործերում, 3% մինչև 3000 ա. գործերում, 5% մինչև 10,000 ա. գործերում և 10% 10,000 ա. աւելի հայցագին ունեցող գործերում և թերթավճար՝ համապատասխանօրէն 1, 3, 5 ու 10 ա.: Գնահատման ոչ ենթակայ գործերում, ինչպէս նաև այն զէպքերում, երբ ոչ հայցն առաջադրելիս, ոչ էլ վճիռ կայացնելիս հայցի գինը չի կարելի որոշել, տուրքը առնում է 10 ա. քանակով, իսկ թերթավճարը 3 ա. քանակով ահն մի թերթից: Թերթավճարը առնում է ամեն մի ստացուող ու ներկայացուող թղթից թէ քաղաքացեական թէ էրէական գործերում:

Ծանօթութիւն. — Բրէտական գործերում առանց թերթավճար առնելու արում են մեղադրեալի ներքին միայն քննիչ յանձնաժողովների կզրահացութիւնների պատճէնները և դատակնիքները պատճէնները:

95 307. — Դատարանից է կախուած դատուողին տուրք ու թերթավճար տպուած համար բոււարար միջոցներ չունեցող ճանաչել և տարկեակ կամ կէտուակ վճարումը նոյնիսկ բոլորովին ազատել վճարումից:

96 307. — Վճիռ կայացնելիս ժողովրդական դատարանը որոշում է նաև թէ հայցուողը պիտի պատասխանողին վճարի թէ ընդհակառակը, նայելով

թէ ում օգտին է դործը վճարուած, գործ վաքելու համար կատարուած դատական ծախքերը (տուրք, վճարներ և իրաւապաշտպանի աշխատանքի վարձատրութիւնը) լիովին կամ մասամբ: Դրա հետ միասին դատարանը կարող է անարդար կողմին դատապարտել հատուցանելու գործ վարելու հետ կուպուսնեցող՝ միւս կողմի արած ոչ դատական ծախքերն ու կրած կորուստները:

97 Յ0Դ.— Գրեական գործերում ժողովրդական դատարանը կարող է մեղաւորին դատապարտել վճարելու գործ վարելու համար միւս կողմի կատարած դատական և ոչ դատական ծախքերն ու կրած կորուստները:

98 Յ0Դ.— Վճարեկ գանգոտ տալիս դատական տուրք ու թերթավճար է առնուում ընդհանուր հիմքով նայցե բողոքարկուած գումարից: Վճարեկ գանգատի առթիւ վճիռ կայացնելիս ժողովրդական դատարանի խորհուրդը ծախքերի նկատմամբ դեկավարուում է 96 և 97 յօդուածներով:

Ստորագրեցին՝ Ն. Կ. Գ. Կ. նախագահ

ԵԱ. ՍՎԵՐԴԼՈՎ

Արդարադատութեան ժողովրդական կոմիտար

ԿՈՒՐՍՎԻՑ

Ն. Կ. Գ. Կ. քարտուղար Վ. ԱՎԱՆԵՍՕՎ

30 նոյեմբերի 1918 թ.:

Հաստարակուած է Խորհուրդների Համառուսական Կենտրոնական Դործադիր Կոմիտէի Համբաւբերի 1918 թ. գեկտեմբերի 8-ի ու 10-ի №№ 269 ու 270 ում:

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ  
ԿՕՄԻՍՍԻՐԻԱՏԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆ**

ՎԱՂԱԿԷՏ ԱԶԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

(Հրահանգ)

1. Ազատագրկման պատեթ կրող անձերը կարող

են ժողովրդական դատարանի կամ յեղափոխական տրիբունալի կարգադրութեամբ, լստ լնդատութեան, ազատուել պատեթի ժամկէտը լրանալուց աւաջ:

2. Վաղակէտ աղատման մասին կարող են խընդէք յարուցանել թէ՛ անքը, ազատութիւնից զրկուածը, թէ՛ նրա մերձաւորները և թէ՛ բաշխիչ յանձնաժողովը (օրին. ժող. 1918 թ. № 53, յօդ. 598, Կ. Կ. 16 և 17): Ինքը՝ ազատութիւնից զրկուածը կամ նրա մերձաւորները չեն կարող վաղակէտ աղատման մասին խնդրարկութիւն յարուցանել պատեթի ժամկէտի կէսը կրկուց աւաջ:

3. Խնդիրքը ուղղուում է՝ ա) դատակնիք կայացնող ժողովրդական դատարանին կամ յեղափոխական տրիբունալին, և թէ՛ ազատութիւնից զրկուածը պատեթ կրում է նոյն դատական շրջանում և բ) պատեթ կրելու վայրի ժողովրդական դատարանին կամ յեղափոխական տրիբունալին, և թէ՛ պատժավայրը ուրիշ դատական շրջանում է գտնուում:

4. Ժողովրդական դատարանը կամ յեղափոխական տրիբունալը վաղակէտ աղատման խնդիրքը քննում է խնդրքը ստանալու օրից մի ամսուայ ժամկէտում բաց նիստում, ատենակոչելով թէ՛ պատեթ կրողին և թէ՛ նրա աղատման մասին խնդրքը տուողներին, սակայն նրանցից ուէ մէկի ատեսան չգալը գործի քննութիւնը չի աւելայում:

5. Ժողովրդական դատարանը վաղակէտ աղատման խնդրքը քննում է մշտական ժողովրդական դատարարի և 2 կամ 6 ատենակալների կազմով, նա յելով թէ ինչ կազմով է նիստ ունեցել դատակնիք կայացնող դատարանը:

Նախկին կազմութեան դատարանների կողմից դատապարտուած անձերի խնդիրքները քննում է ժողովրդական դատարանը դատարարի և 6 ատենակալների կազմով:

6. Վաղակէտ աղատման խնդիրքների քննութեան բոլոր դէպքերում անհրաժեշտաբար պիտի

ներկայ շինի. իրրև փորձագէտ (գիտակ անձ), իրաւազրկեալն կալանատեղի դատախարակների կողէզիւն յի ներկայիչը. եսկ ուր այդպիսի կողէզիւն չկայ, կալանատեղի պետը կամ նրա օգնականը:

7. Ժողովրդական դատարանը կամ յիշմարտական տրիբունալը քննութեան է առնում խնդիրքը, լսում է նախընթաց յօդուածում յիշուած գիտակ անձերի եզրակացութիւնը և, եթէ հարկ համարի, սկէ մասնագէտ-փորձագէտից էլ է եզրակացութիւն պահանջում և այնուհետև որոշում կայացնում պայմանաւոր-վազակէտ ազատման կամ խնդիրքի մերժման մասին:

8. Պայմանաւոր-վազակէտ ազատման որոշման մէջ դատարանը մատնանշում է, թէ վազակէտ ազատուածը, եթէ պատժի չկրած ժամկէտի քննադատում սկէ յանցանք կատարի, անմիջապէս ազատութիւնից կը զրկուի այնքան ժամանակով, որքանով նրա պատիժը կրճատուած էր:

9. Այն ղէպքում, երբ վազակէտ ազատուածը պատժի չկրած ժամկէտի քննադատում նորից յանցանք է գործում, նոր գործը քննող դատարանից է կախուած՝ նախկին գործի համար նշանակուած պատժից վազակէտ ազատուածը վերացնել կամ թէ, նոր գործած յանցանքը առանձնապէս վտանգաւոր չը համարելով, բաւականամալ միայն վերջին յանցանքի համար նշանակուած պատժով:

10. Պայմանաւոր-վազակէտ ազատման որոշման մէջ դատարանը մատնանշում է խորհրդալին պարօնատի այն մարմինը, իսկ այդպիսի մարմին չեղած դէպքում՝ մի այլ հիմնարկութիւն կամ անձ, որ պարտաւոր է պայմանաւորապէս ազատուածի հրակրօթեան ու վերադիտուծի պարտականութիւնը ստանձնել:

Ստորագրեց Արգարազատութեան Ժողովրդական կոմիտար ԿՈՒՆՍԿԻՅ:

25 նոյեմբերի  
1918 թիւ

ՄՍՏԵՆԱՒՍՐՆ